## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

9 հոկտեմբերի 2019թ. թիվ 518

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 67 և 68 կետերը, հաշվի առնելով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ Գևորգ Պետրոսի Ազարյանի դիմում-բողոքը՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ  եմ.

1. Գևորգ Պետրոսի Ազարյանի դիմում-բողոքի հիման վրա «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի հոկտեմբերի 8-ին ժ. $11^{00}$-ին կայացած մրցույթի արդյունքները քննարկելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

5-օրյա ժամկետում ավարտել քննարկումը և արդյունքների մասին ներկայացնել եզրակացություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հոկտեմբերի 9-ի
թիվ 518 կարգադրության

# Կ Ա Զ Մ

## «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կայացած մրցույթի արդյունքները քննարկելու նպատակով ստեղծվող հանձնաժողովի

| | |
|---|---|
| Գայանե Մարկոսյան | - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ |
| Ալիկ Սահակյան | - ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ |
| Շողիկ Սուքիասյան | - ՀՀ առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության խորհրդատու |
| Արմեն Սաֆարյան | - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության բժիշկ-փորձագետ |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ